ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Տ Ն Օ Ր Ե Ն

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«18» 01 2016թ. № 11/22

Օր. 1

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Է. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեր 15.01.2016թ. N1111/00284 գրության

Հարգելի պարոն նախարար

Ուղարկում եմ <<Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև անվտանգության բնագավառում համագործակցության և ահաբեկչության դեմ պայքարի մասին>> համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ 1 թերթից:

Հարգանքով՝ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

00376

6087

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև անվտանգության բնագավառում համագործակցության և ահաբեկչության դեմ պայքարի մասին>> համաձայնագրի նպատակն է ապահովել Կողմերի փոխհամագործակցությունը միջազգային ահաբեկչության, կազմակերպված հանցավորության և այլ հանցագործությունների դեմ տարվող պայքարում: Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունները Համաձայնագրով կզարգացնեն բարեկամության կապերը, կնպաստեն անվտանգության և հանցավորության դեմ պայքարի ոլորտներում համագործակցության խորացմանը:

Համաձայնագրի կնքումը նպատակահարմար է՝ ելնելով հանցավորության բոլոր դրսևորումների, այդ թվում՝ անվտանգության մարմինների իրավասության ոլորտին վերաբերող հանցագործությունների դեմ պայքարում Կողմերի փոխհամագործակցությունն ապահովելու անհրաժեշտությունից:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն